ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
բանասիրական գիտ. դոկտոր,
Վանաձորի պետ. համալսարան

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ՝ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԻ ԱՋՆՎԱԿԱՆ

Մեսրոպ Մաշտոցը մշտապես եղել է հայագիտության ուշադրության կենտրոնում. նրա մասին գրել են Ղ. Ալիշանը[1], Հ. Գաթրճյանը[2], Ի. Հարությունյանը[3], Մ. արք. Օրմանյանը[4], Մ. Աբեղյանը[5], Հ. Մանանդյանը[6], Ն. Ակինյանը[7], Յ. Մարկվարտը[8], Վ. Նալբանդյանը[9], Ա. Մարտիրոսյանը[10] եւ այլք: Սակայն, որքան էլ զարմանալի է, Մաշտոցի կենսագրության մեջ դեռեւս կան մութ մնացած որոշ հարցեր: Նրա կյանքի վերջին ուսումնասիրողներից մեկը՝ Վ. Նալբանդյանը, իրավամբ գրում է. «Բավականին անորոշ ու պակասավոր են, մասնավորապես, նրա կյանքի ու գործունեության առաջին շրջանին՝ աշխարհական Մաշտոցին վերաբերող տեղեկությունները»[11]:

Ելնելով մատենագրական սկզբնաղբյուրների եւ համապատասխան կարծիքների պատմահամեմատական վերլուծությունից՝ սույն հոդվածն

---

[1] **Ղ. Ալիշան**, Հայապատում, հ. Ա., Վենետիկ, 1901:

[2] **Յ. Գաթրճեան**, Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս, հ. Բ., ի Վիեննա, 1852, էջ 521-523:

[3] **Ի. Յարութիւնեան**, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892:

[4] **Մ. արք. Օրմանեան**,Ազգապատում, հ. Ա., Ս. Էջմիածին, 2001, էջ 302-371:

[5] **Մ. Աբեղյան**, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականության սկիզբը, Կորյուն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1981, էջ 5-52:

[6] **Я. Манандян**, Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность, Ереван, 1941:

[7] **Ն. Ակինեան**, Ս. Մաշտոց վարդապետ, Կեանքն ու գործունէութիւնը հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949:

[8] **Յ. Մարկվարտ**, Հայոց այբուբենի ծագումը եւ Ս. Մաշտոցի կենսագրությունը, «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երեւան, 1962, էջ 117-180:

[9] **Վ. Նալբանդյան**, Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը, «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, Երեւան, 1963, էջ 5-51:

[10] **Ա. Մարտիրոսյան**, Մաշտոց, Երեւան, 1982:

[11] **Վ. Նալբանդյան**, նշվ. աշխ., էջ 21:

անդրադառնում է Մաշտոցի ծագումնաբանության խնդրին, փորձում պարզել վերջինիս հոր՝ երեւելի Վարդանի անձի եւ Սահակ Պարթեւի հետ բարեկամական կապի առկայության խնդիրը, հիմնավորում Մաշտոցի ազնվական, մասնավորապես Մամիկոնյան լինելու վարկածը, հստակեցնում Սահակ Պարթեւի ու Մամիկոնյան ազնվական տոհմի միջեւ եղած բարեկամական կապը:

Մաշտոցի մասին էական տեղեկություններ են մեզ հաղորդում Ե. դարի մատենագիրներ Կորյունը[12], Մովսես Խորենացին[13], Ղազար Փարպեցին[14]: Ավելի ուշ հանդես եկող պատմիչները՝ Մովսես Դասխուրանցին (Կաղանկատվացի)[15], Հովհաննես Դրասխանակերտցին[16], Թովմա Արծրունին[17], Ստեփանոս Օրբելյանը[18] եւ այլք, որեւէ էական բան չեն ասում Մաշտոցի մասին, այլ հիմնականում կրկնում են նախորդներին:

Արժեքավոր մի տեղեկություն է հաստատում Կիրակոս Գանձակեցին. «Սուրբ Սահակը հայրապետությունը վարեց հիսունմեկ տարի եւ խաղաղ մահով փոխադրվեց հրեշտակների կարգը (մահացավ)՝ իր աթոռը հանձնելով սուրբ Մեսրոպին, որ եւ բարի հիշատակ թողնելով գալոց սերունդներին, նույն տարին լրացրեց կյանքը՝ Վռամ երկրորդի որդի Հազկերտ արքայի առաջին տարվա սկզբում»[19]: Կենսագրական այս կարեւոր տեղեկությունը մութ ակնարկով հաղորդել է նաեւ Մովսես Խորենացին. «Իսկ եպիսկոպոսության աթոռին իբրեւ տեղակալ նստեց, երանելի Մեսրոպի հրամանով, նրա աշակերտը՝ Հովսեփ քահանան, որ Վայոց ձորից էր, Հողոցիմ գյուղից»[20]: Փաստորեն, ինչպես հստակ վկայում է Կիրակոս Գանձակեցին, Մաշտոցը Սահակի մահից հետո որոշ ժամանակ զբաղեցրել է կաթողիկոսական աթոռը: Սա կարեւոր մի տեղեկություն է, որն անտեսվել է Մաշտոցի կենսագիրների եւ ուսումնասիրողների կողմից: Միայն Մ. արք. Օրմանյանն է նկատել, որ Մաշտոցը «Սահակի ժամանակէն Վաղարշապատի մէջ անոր փոխանորդութիւնը կը վարէր, միեւնոյն կերպով իր պաշտօնը շարունակեց»[21]:

---

[12] **Կորյուն**,Վարք Մաշտոցի, Երեւան, 1981:
[13] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երեւան, 1968, Գ. գիրք:
[14] **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Երեւան, 1982, դրվագ Ա.:
[15] **Մովսես Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, Երեւան, 1969, էջ 70-71:
[16] **Հովհաննես Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, Երեւան, 1996, էջ 56-61:
[17] **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1985, էջ 117-123:
[18] **Ստեփանոս Օրբելյան**,Սյունիքի պատմություն, Երեւան, 1986, էջ 80-81, 97-98:
[19] **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 40:
[20] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Գ., կէ.:
[21] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., էջ 369:

Անհնար է պատկերացնել, որ Հայոց հայրապետական աթոռին Սահակից հետո կարող էր բազմել պատահական մեկը: Ամենայն հավանականությամբ, Սահակին փոխարինելու էր եկել նրա մերձավոր բարեկամը՝ Մամիկոնյանների տոհմից: Այսպես մտածելու համար կան մի շարք կողմնակի ապացույցներ, որոնք իրենց նպաստն են բերում հարցի պարզաբանմանը:

Մաշտոցը ծնվել է մոտ 361-364 թթ. Տարոնի Հացեկք (Հացեկաց) գյուղում՝ Երանելի (Երեւելի) Վարդանի ընտանիքում, ով «յազատրտանէ»[22] էր, այսինքն՝ ազնվական:

Ո՞վ էր այս Երեւելի ազնվական Վարդանը: Հայագիտությունը նրա վերաբերյալ երկու հիմնական տեսակետ է շրջանառել: Այսպես՝ Ն. Ակինյանը, Ստ. Մալխասյանցը, Գ. Նահապետյանը Մաշտոցի հայր Վարդանին նույնացնում են Փավստոս Բուզանդի Պատմության Գ. դպրության ԺԹ. գլխում հիշատակված հարճորդի Վրիկի հետ (այս կարծիքը քիչ հավանական է թվում մեզ, քանի որ նախ՝ Վարդանի կրճատ ձեւը Վրիկը չէ, ապա եւ Երեւելի ազնվական Վարդանին անհիմն կերպով համարում են կարճազատ): Իսկ Հ. Գաթրճյանը, Մ. Էմինը, Մ. արք. Օրմանյանը Մաշտոցի հայր են համարում Վարդան Մամիկոնյանին: Սակայն այս տեսակետը հանդիպել է Ի. Հարությունյանի, Գ. Ֆնտգլյանի, Հ. Մանանդյանի եւ այլոց առարկություններին[23]: Մաշտոցի կյանքի վերջին ուսումնասիրողներից Ա. Մարտիրոսյանը գրում է. «Ով էլ լինի Վարդանը՝ Մամիկոնյան տոհմից, Լուսավորչի սերնդից, Վահունի, Արշակունիներին արյունակից, թե կրոնավոր, միեւնույն է, չէր կարող հասարակ ծագում ունենալ»[24]: Մի խոսքով, ճիշտն այն է (դա է հաստատում նաեւ Անանիա Շիրակացու վկայությունը), որ Մաշտոցն ունի ազնվական ծագում: Մնում է պարզել, թե որ ազնվական տոհմից են Երեւելի Վարդանն ու իր որդին:

Այս հարցի պատասխանը օգնում են գտնել Փավստոս Բուզանդը եւ Ժ. դարի պատմիչ Մեսրոպ երեց Վայոցձորեցին. վերջինս ուշագրավ վկայություն է թողել Մաշտոցի եւ Մամիկոնյանների մասին: Մովսես Խորենացին մի ակնարկ է արել այն մասին, որ Մաշտոցը եղել է Ներսես Մեծի աշակերտը. «...սնվել ու սովորել էր մեծն Ներսեսի մոտ եւ նրա վախճանվելուց հետո արքունական դռանը քարտուղար էր նշանակվել»[25]:

---

[22] «Մատենագիրք Հայոց», հ. Ե., Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 951:
[23] Այս մասին մանրամասն տես **Ա. Մարտիրոսյան**,Մաշտոց, Երեւան, 1982, էջ 141-147:
[24] Անդ, էջ 147:
[25] **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Գ., խէ.:

Պատմահոր այս ակնարկն առավել հստակ ներկայացրել է Մեսրոպ Վայոցձորեցին. «Իսկ Ներսես Մեծը շրջում էր ողջ Հայոց երկրում եւ հավաքում էր իր վարդապետության նյութը: Նրա հետ էր նաեւ իր աշակերտ Մեսրոպը, որ անվանվեց Մաշտոց. ամենայն կրթությամբ հոգեւոր գործերին տալով իր անձը՝ բազում եւ ոչ դյուրին գործեր եւ անհանգիստ գիշերային քնի պահանջը ոտքի վրա տքնությամբ մի ակնթարթում էր կատարում՝ ոչ սակավ ժամանակ, այլ շատ»[26]: Ավելին՝ Վայոցձորեցու վկայությամբ՝ Ներսես Մեծի մահվան ժամին նրա կողքին էր՝ «...ունկնդրում է նրան իր աշակերտ Մեսրոպը, որ անվանվեց Մաշտոց»[27]:

Ներսես Մեծը սպանվել է 373 թ.՝ Պապ արքայի կողմից, իսկ Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 361 թ. (ըստ Մ. արք. Օրմանյանի՝ 353 թ.), այսինքն՝ 12 (կամ 20) տարեկան է եղել եւ կարող էր լինել կաթողիկոսի աշակերտը, ինչպես վկայում է Մեսրոպ երեցը: Սա նկատել է դեռեւս Ղ. Ալիշանը. «Մեսրովպ Մաշտոց, որ եղած էր աշակերտ եւ պաշտօնեայ եւ ընթերակաց մահուան Մեծին Ներսէսի, հաւանօրէն եւ գրող վարուցն, յորմէ առեր է այս իր անուանակից Երէցն, եւ այլք»[28]:

Արդ՝ հստակ է մի բան, որ Մաշտոցը Ներսես Մեծի աշակերտն է: Իսկ պատահական մեկը չէր կարող լինել Հայոց հայրապետի աշակերտը, բնականաբար, նա պիտի լիներ ազնվական դասից: Տարոնը, որտեղ ծնվել է Մաշտոցը, այս շրջանում եղել է Մամիկոնյանների կալվածքը, եւ հիմքեր կան ենթադրելու, որ Մաշտոցը Մամիկոնյանների ազնվական տանից էր, մանավանդ Մաշտոցի հոր՝ Վարդանի անունը, ըստ պատմիչների վկայության, հատուկ է եղել բացառապես Մամիկոնյան տոհմին:

Այսպես՝ Ներսեսը, ով Արշակ Բ. թագավորի հորաքրոջ որդին էր, փեսան է Մամիկոնյանների. նա ամուսնացել է սպարապետ Արտավազդ Մամիկոնյանի որդի Վարդանի դստեր՝ Սահանդուխտի հետ, եւ այդ ամուսնությունից 348 թ. ծնվել է Սահակ Պարթեւը:

Կորյունի կողմից Վարդանն անվանվել է երանելի կամ երեւելի. վերջինն ավելի հավանական է համարել Էմ. Պիվազյանը[29]: Երեւելի բառը նշանակում է «հայտնի, նշանավոր, անվանի, մեծ»: Փաստորեն, երեւելի Վարդանը կարող էր լինել Մամիկոնյանների նահապետ, ավագ իշխան

---

[26] **Մեսրոպ Վայոցձորեցի**, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին եւ սուրբ Ներսես Հայոց հայրապետի պատմությունը, արեւելահայերեն թարգմ., առաջ. եւ ծանոթ.՝ Վ. Եղիազարյանի, Վանաձոր, 2015, էջ 79:

[27] Անդ, էջ 99:

[28] **Ղ. Ալիշան**, Հայապատում, հ. Ա., Վենետիկ, 1901, էջ 201:

[29] Էմ. Պիվազյանը Կորյունի բնագրի տողատակում նշել է. «Թերեւս ճիշտն է *երեւելի* այլ ընթերցումը». տես **Կորյուն**, Վարք Մաշտոցի, Երեւան, 1981, էջ 84:

Վարդան Մամիկոնյանը՝ Վաչե Մամիկոնյանի թոռը: Վաչե Մամիկոնյանի որդին է Արտավազդ Մամիկոնյանը, ով ուներ չորս որդի՝ Վարդան, Վասակ, Վահան, Վրուժ: Երեւելի Վարդան Մամիկոնյանն այդ չորս եղբայրների ավագն է, ում Արշակ թագավորը կարգեց Մամիկոնյան ցեղի նահապետ, իսկ նրա եղբորը՝ Վասակին՝ սպարապետ: Երեւելի նահապետ Վարդանն աներն է Ներսես Մեծի, մորական պապն է Սահակ Պարթեւի, ում անունով էլ անվանակոչվել է Սահակ Պարթեւի դստեր՝ Սահականույշի եւ Համազասպ Մամիկոնյանի որդին՝ Ավարայրի հերոս Վարդան Մամիկոնյանը:

Նահապետ Վարդան Մամիկոնյանի մահը, ըստ Փավստոս Բուզանդի Պատմության Դ. դպրության ԺԸ. գլխի, վրա է հասել անսպասելի, որին ականատես է եղել նաեւ նրա հղի կինը, ով հենց այդ պահին ծննդաբերել է, եւ այդ զավակին անվանակոչել են հոր՝ Վարդանի անունով[30]: Բնականաբար, այս նահապետ Վարդանի որդի փոքր Վարդանը չէր կարող լինել Մաշտոցի հայրը:

Այսինքն՝ Դ. դարում հանդիպող երեւելի Վարդանը, հավանաբար, հենց այս նահապետ Վարդան Մամիկոնյանն է, ով հիշատակվում է Հայոց ավագ նախարարների մեջ որպես առաջինը[31], ով Ներսես Մեծի աներն է եւ նրա պատվիրակության կազմում մեկնել է Վաղես կայսեր պալատ: Ստացվում է, որ Ներսես Մեծն իր կնոջ եղբորը՝ Մեսրոպին, վերցրել է իր հովանու տակ եւ կրթել: Մեսրոպը 12 (կամ 20) տարեկան էր, երբ սպանվեց Ներսես Մեծը: Ուրեմն՝ Մեսրոպ Մաշտոցը Ներսեսի որդի Սահակ Պարթեւի քեռին է, թեեւ Սահակից փոքր է 13 (կամ 5) տարով:

Մամիկոնյանները, ինչպես Վայոցձորեցին է գրում, եղել են «Սնուցիչք եւ մանկակալք եւ ընտանիք թագաւորին»[32], այսինքն՝ «թագավորի կրթողները, դաստիարակներն ու բարեկամներն»[33] էին: Սա հաստատում է նաեւ Փավստոս Բուզանդը. «Ինքը՝ Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսը, եւ Մամիկոնյան ցեղի մեծ նահապետը Վարդան անունով՝ Հայոց մեծ ստրատելատ Վասակի եղբայրը, որոնք Արշակ թագավորի դայակներն ու սնուցանողներն էին»[34]:

Ահա Մաշտոցը՝ որպես Մամիկոնյան տոհմի ազնվական, Ներսեսի մահից հետո դառնում է արքունական դպիր՝ Արշակունիների պալատական քարտու-

---

[30] **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Դ., ժը.:

[31] Տես **Մեսրոպ Վայոցձորեցի**, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին եւ սուրբ Ներսես Հայոց հայրապետի պատմությունը, էջ 55:

[32] Անդ, էջ 20:

[33] Անդ, էջ 21:

[34] **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Դ., ժա.:

դար: Ինչպես վկայում է Ղազար Փարպեցին, Մաշտոցն արքունական դպիր է եղել դեռեւս Խոսրով արքայի արքունիքում[35]*, այսինքն՝ 385-389 թվականներին, ապա Վռամշապուհի արքունիքում՝ 389-ից սկսած: Այսինքն՝ Մաշտոցը եղել է 20-25 տարեկան, երբ դարձել է արքունական դպիր: Մինչդեռ 373-385 թթ.՝ Ներսեսի մահից մինչեւ Խոսրովի թագավորելն ընկած ժամանակի մասին կենսագիրները լռում են:*

Ճիշտ է նկատել Վ. Նալբանդյանը. «Միանգամայն անհարիր է, որ հասարակ մի գրագիր Սահակ Պարթեւ Ամենայն Հայոց կաթողիկոսի ու Վռամշապուհ թագավորի մոտ վաստակած լիներ այդպիսի մեծ հեղինակություն՝ դեռեւս նախքան գրերի գյուտը»[36]*:*

Ակնհայտ է, որ Սահակ Պարթեւ կաթողիկոսի եւ Վռամշապուհ թագավորի վստահությունը շահած Մաշտոցը նրանց մերձավորն էր: Դա հաստատվում է նաեւ նրանով, որ Լուսավորչի տոհմի սպառման պատճառով Սահակը կաթողիկոսի տեղապահ է նշանակում Մեսրոպին, իսկ նա էլ՝ իր հավատարիմ աշակերտ Հովսեփ Վայոցձորեցուն: Մեսրոպ Վայոցձորեցին գրում է. «Եւ արդ, Սահակ եպիսկոպոսը վախճանից առաջ տալիս է Սուրբ Գրիգորի աթոռի տեղապահությունը Մեսրոպ վարդապետին, իսկ Մեսրոպը տալիս է Հովսեփ երեցին, իսկ ժամանակի խառնաշփոթից չհասցրեց Հովսեփը ձեռնադրվել եպիսկոպոս կամ կաթողիկոս, այլ մնաց երեց եւ նույնի մեջ վախճանվեց»[37]*:*

Սահակ Պարթեւը ոչ միայն Մամիկոնյանների թոռն է, այլեւ խնամին. նա իր միակ աղջկան՝ Սահականույշին, ամուսնացրել է Համազասպ Մամիկոնյանի հետ, ով Մանվել Մամիկոնյանի կրտսեր որդին է՝ Հմայակ եւ Արտավազդ Մամիկոնյանների եղբայրը, ում պապը սպարապետ Վասակ Մամիկոնյանն է (Մամիկոնյանների տոհմի ճյուղագրությունը ներկայացնում ենք հավելվածում): Սահակն ունեցել է երեք թոռ՝ Վարդան, Հմայակ, Համազասպյան: Պահլավունիների Գրիգորյան տոհմաճյուղն արական գծով սպառվել է Սահակ Պարթեւի մահով, եւ այդ տոհմի կալվածքներն անցել են Մամիկոնյաններին:

Բնական է, որ Սահակի կողքին, հարազատի նման, կանգնած է Մեսրոպ Մաշտոցը, ով նրա քեռին է: Պատահական չէ, որ Սահակն իր թոռանը՝ Վարդան Մամիկոնյանին, սպարապետ կարգելու համար Թեոդոս կայսեր մոտ

---

[35] **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն, Ա., ժ.:

[36] **Վ. Նալբանդյան**, Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը, «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, էջ 25:

[37] **Մեսրոպ Վայոցձորեցի**, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին եւ սուրբ Ներսես Հայոց հայրապետի պատմությունը, էջ 113:

է ուղարկում հենց Մաշտոցի հետ[38]*: Անգամ Մաշտոցին ցանկանում էին թաղել Տարոնում Աշտիշատում Սահակ Պարթևի կողքին, որը եւս հաստատում է նրանց մերձավոր բարեկամ լինելը:*

Մ. արք. Օրմանյանի կարծիքը հավանական համարելով՝ դեռեւս «Հայ հին գրականության պատմություն» գրքում գրել ենք. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մաշտոցի ծննդավայրը Տարոնն է, «որով կը լինի Մամիկոնեան ազգի կամ ցեղի սերունդ, քանի որ արքունիքի մէջ պաշտօնավարութեամբը ռամիկ դասակարգէ չլինելն ալ կը վկայուի»[39]*, պետք է ենթադրել, որ երեւելի Վարդանը եւ նրա որդի Մեսրոպը Մամիկոնյան տոհմից են, մանավանդ որ Տարոնը Մամիկոնյանների նախարարական կալվածքն էր»*[40]*:*

Վերոհիշյալ տեղեկությունները լիովին հիմք են տալիս առաջ քաշելու եւ պնդելու այն վարկածը, որ Մաշտոցն իսկապես Վասակ սպարապետի ավագ եղբայր Վարդան Մամիկոնյանի որդին է:

Համադրելով եւ գնահատելով նշված փաստերի վերլուծության արդյունքները՝ հանգում ենք այն եզրակացության, որ Մաշտոցը Մամիկոնյանների կալվածք համարվող Տարոն գավառից է, հաստատապես Ներսես Մեծի աշակերտը, Մամիկոնյան ավագ իշխան երեւելի Վարդան Մամիկոնյանի որդին, ուստի եւ Ներսես Մեծի կնոջ՝ Սահանդուխտի եղբայրը, այսինքն՝ Սահակ Պարթեւի քեռին, ու որպես ազնվական՝ արքունական դպիր է եղել դեռեւս Խոսրովի օրոք: Մաշտոցը վայելել է իր քրոջ որդու՝ կաթողիկոս Սահակ Պարթեւի վստահությունը, ինչի վկայությունը ոչ միայն Սահակի աջակցությամբ կատարված գրերի գյուտն է, այլեւ կաթողիկոսի թոռանը՝ Վարդան Մամիկոնյանին Թեոդոս կայսեր մոտ ուղեկցելը: Ավելին՝ նույնիսկ Սահակ Պարթեւի կենդանության ժամանակ Մաշտոցը եղել է կաթողիկոսի տեղապահ, իսկ Սահակի մահից հետո, որպես նրա արյունակից, մի կարճ ժամանակ զբաղեցրել է հայրապետական աթոռը[41]*:*

---

[38] **Մովսես Խորենացի**,Հայոց պատմություն, Գ., ձէ.:

[39] **Մ. արք. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա., էջ 303:

[40] **Վ. Եղիազարյան**, Հայ հին գրականության պատմություն, Երեւան, 2014, էջ 186-187:

[41] Համապատասխանաբար ստանում ենք Մամիկոնյանների ճյուղագրության հետեւյալ պատկերը՝

Վաչե - Արտավազդ - Վարդան նահապետ, Վասակ սպարապետ, Վահան, Վրուժ:

Վարդան նահապետ - Սահանդուխտ (Ներսես Մեծի կինը), *Մեսրոպ Մաշտոց*, Վարդան:

Վասակ սպարապետ - Մանվել սպարապետ, Մուշեղ Քաջ սպարապետ, Կոն, Համազասպ:

Վահան - Սամվել:

РЕЗЮМЕ

Маштоц был родом из провинции Тарон, вотчины Мамиконянов. Он был учеником католикоса Нерсеса Великого, сыном старшего князя рода Мамиконянов - блаженного Вардана Мамиконяна, соответственно, братом Саандухт - жены Нерсеса Великого, т.е. дядей Саака Партева и, будучи представителем знатного рода, занимал должность дьяка-секретаря еще при дворе Хосрова IV. Маштоц пользовался доверием своего племянника, сына сестры - католикоса Саака Партева, свидетельством чего является не только то, что именно ему была поручена ответственнейшая миссия - изобретение письменности, осуществленное при непосредственном участии Саака Партева, но и сопровождение внука католикоса - Вардана Мамиконяна - к императору Феодосию. Более того, даже при жизни Саака Партева Маштоц был местоблюстителем католикоса, а после смерти Саака, являясь его кровным родственником, некоторое время занимал патриарший престол.

SUMMARY

Mesrop Mashtots is from the province of Taron, which was considered the Mamikonyan dynasty estate. He was the disciple of Nerses the Great, son of the Commander-in-chief distinguished Vardan Mamikonyan, brother of Nerses the Great's wife Sahandukht, i.e. Sahak Parthev's uncle, and as a nobleman he was a regal secretary in Khosrov's royal court. Mashtots was highly respected and trusted by his nephew Sahak Parthev, the evidence of which is the Armenian Script Invention assisted by the latter, as well as the fact that Mashtots accompanied the Catholicos' grandson Vardan Mamikonyan to visit Theodosius Caesar. Moreover, even in Sahak Parthev's lifetime Mashtots was the Catholicos' vicar, and after Sahak Parthev's death, as the one related in kinship, he held the Patriarchal See.

Մանվել սպարապետ - Հմայակ, Արտավազդ, Համազասպ (Սահակ Պարթեւի փեսա): Համազասպ (Սահակ Պարթեւի փեսա) - Վարդան, Հմայակ Հրաշալի, Համազասպյան: Մամիկոնյանների ցեղագրության մասին մանրամասն տես «**Մեսրոպ Վայոցձորեցի**, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին եւ սուրբ Ներսես Հայոց հայրապետի պատմությունը, Վանաձոր, 2015» գրքի մեր ծանոթագրությունները, որոնք նոր լույս են սփռում Մաշտոցի եւ Մամիկոնյանների բարեկամական կապի բացահայտման վրա: